ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/127

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Լ. Պողոսյանի (լիազորագիր՝ տրված 24.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7873-2021 գրությամբ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.05.2021թ. թիվ ՊՆ/02/2555-2021 գրության հիման վրա 18.05.2021թ. թիվ 26/26-1/7873-2021 գրությամբ նախաձեռնել է «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.05.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան սույն թվականի մայիսի 19-ին բողոքը քննող մարմնի կողմից «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցման առ այն, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.05.2021թ թիվ 26/26-1/7873-2021 գրությամբ նախաձեռնել է «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, ներկայացնում ենք պարզաբանում և մեր դիրքորոշումը:

Սույն թվականի մայիսի 3-ին Armeps համակարգի միջոցով info@autofan.am էլ-փոստի հասցեին ուղարկված անհամապատասխանության շտկման պահանջը էլ-փոստի ծանրաբեռնվածության և դրա հետևանքով առաջացած տեխնիկական խնդիրների պատճառով «Ավստո ֆան Էյ Սի» ՍՊԸ-ին հասանելի է դարձել միայն 2021թվականի մայիսի 5-ին: Նշված խնդրի մասին «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն հեռախոսային զանգի միջոցով անմիջապես տեղեկացրել է ՀՀ Պաշտպանության նախարարությանը, որից հետո ՀՀ Պաշտպանության նախարարության a-hovhannisyan@mil.am էլ-փոստի հասցեին ուղարկվել են պահանջված շտկման փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն միշտ բարձր պատասխանատվությամբ և պարտաճանաչությամբ է մոտեցել պետական գնումների գործընթացներին իր մասնակցությանը, համապատասխան ժամկետներում, բարձրակարգ կերպով և բարեխղճորեն իրականցրել է իր կողմից ստանձնած պարտավորությունները: «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն բազմիցս դրսևորել է բարձր կորպորատիվ և սոցիալական պատասխանատվություն՝ պատշաճ որակի յուղեր և քսայուղեր մատակարարելով ՀՀ Պաշտպանության նախարարությանը և պետական գնումների շրջանակներում, և արցախյան երկրորդ պատերազմի շրջանում նվիրատվության հիմունքներով:

Հաշվի առնելով վերը նշված իրավիճակը՝ խնդրում ենք «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն վերոհիշյալ գրության Ընկերությունը 02.06.2021թ. հայտնել է հետևյալը.

««ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՍՑ-ՆԳ-2021/127 ընթացակարգի շրջանակներում 2021թ. մայիսի 24-ին տեղի ունեցած նիստի արդյունքների հիման վրա 2021թ. մայիսի 31-ին «Գլոբալքոմ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է info@autofan.am հասցեով էլեկտրոնային փոստի փորձաքննություն:

Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի աշխատակցի համակարգչի (որի վրա գործել է info@autofan.am էլ-փոստը) ծրագրային ապահովման խնդիրների պատճառով Microsoft outlook ծրագիրը 2021 թ. մայիսի 3-4-ին չի ստացված նամակները և միայն խնդիրը լուծելուց հետո՝ սույն թվականի մայիսի 5-ին հնարավոր է եղել դրանք տեսնել (կից ուղարկում ենք փորձաքննության արդյունքների մասին պաշտոնական գրությունը):

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն պատրաստ է եղել լիարժեքորեն կատարելու գնման ընթացակարգով սահմանված մասնակցի իր պարտականությունները, ինչի մասին վկայում է այն փաստը, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին շտկման պահանջը հասանելի դառնալուց անմիջապես հետո կատարվել է պահանջված շտկումը:

Հաշվի առնելով վերը նշված իրավիճակը՝ խնդրում ենք «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն չներառել գնումների գործընթացին մասնակցելու չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/127 ընթացակարգի շրջանակներում 24.05.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.05.2021թ. թիվ ՊՆ/02/2555-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով

գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 15-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրով ներկայացվել է Ընթացակարգի հրավերով՝ նույն չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերից տարբերվող՝ այլ տեխնիկական պայմաններով բնութագրեր ունեցող ապրանք, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի 15-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «ՏՊ 2451-004-10488057-94, ՀՍՏ ԻՍՕ 4925-2005 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ» տեղեկատվությունը, իսկ Մասնակիցը ներկայացրել է «USO 36732629-084-2019» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):

Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՕՍՏ, USO և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի ուստի անհրաժեշտ էր Մասնակցի կողմից առաջարկվող ստանդարտը ներկայացնելու դեպքում ներկայացնել դրա (USO) կրկնօրինակը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն.

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 03.05.2021թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps

(www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն.

«Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար:

Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է»:

Քանի որ Մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.05.2021թ. կայացած նիստում Մասնակցի հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը Ընթացակարգի 1-ին չափաբաժնով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները:

Մասնակիցը շտկված փաստաթղթերը ներկայացրել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետից ուշացումով՝ 04.05.2021թ.-ի փոխարեն ուղարկելով՝ 05.05.2021թ., որի պատճառով ներկայացված փատաթղթերը չեն քննարկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/127 ընթացակարգի շրջանակներում 24.05.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2021/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/127 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 15-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում ներկայացվել է այլ տեխնիկական պայմաններով բնութագիր ունեցող ապրանք, մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի 15-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «ՏՊ 2451-004-10488057-94, ՀՍՏ ԻՍՕ 4925-2005 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ» տեղեկատվությունը, իսկ Մասնակիցը ներկայացրել է «USO 36732629-084-2019» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):

Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՕՍՏ, USO և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի ուստի անհրաժեշտ էր Մասնակցի կողմից առաջարկվող ստանդարտը ներկայացնելու դեպքում ներկայացնել դրա (USO) կրկնօրինակը:

3.Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 03.05.2021թ. որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

4.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 03.05.2021թ. armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշում է կայացրել 15-րդ

չափաբաժնի մասով մերժել Ընկերության հայտը, այն հիմքով, որ վերջինիս սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7873-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.05.2021թ. թիվ ՊՆ/02/2555-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին***:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված

փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 15-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում ներկայացվել է այլ տեխնիկական պայմաններով բնութագիր ունեցող ապրանք, մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի 15-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «ՏՊ 2451-004-10488057-94, ՀՍՏ ԻՍՕ 4925-2005 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ» տեղեկատվությունը, իսկ Մասնակիցը ներկայացրել է «USO 36732629-084-2019» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):

Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳՕՍՏ, ՏՊ, ՕՍՏ, ՍՏՕ և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի ուստի անհրաժեշտ էր Մասնակցի կողմից առաջարկվող ստանդարտը ներկայացնելու դեպքում ներկայացնել դրա (ՍՏՕ) կրկնօրինակը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 03.05.2021թ. որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 03.05.2021թ. armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշում է կայացրել 15-րդ չափաբաժնի մասով մերժել Ընկերության հայտը, այն հիմքով, որ վերջինիս սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել:

Ընկերությունը շտկված փաստաթղթերը ներկայացրել է սահմանված ժամկետից ուշացումով՝ 04.05.2021թ. փոխարեն ուղարկելով 05.05.2021թ., որի պատճառով ներկայացված փաստաթղթերը չեն քննարկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, 15-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է հետևյալ տեսքով.

Հ/Հ	Գնման առարկա	Տեխնիկական բնութագրերը
15	Արգելակի հեղուկ՝ԴՕՏ-4	***<u>ՏՊ 2451-004-10488057-94,ՀՍՏ ԻՍՕ 4925-2005 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ, ԴՕՏ-4 դասի արգելակման հեղուկ</u>*** Համասեռ, թափանցիկ հեղուկ՝ բաց դեղինից մինչև մուգ դեղին: - կինեմատիկական մածուցիկությունը՝ 100°C ոչ պակաս 2 մմ^{2}/վ, 50°C ոչ պակաս 5 մմ^{2}/վ, -40°C ոչ ավել 1450 մմ^{2}/վ,

		- հեղուկի (չոր) եռման ջերմաստիճանը՝ 260 ^{0}C-ից ոչ ցածր, - հեղուկի (խոնավ) եռման ջերմաստիճանը՝ 165 ^{0}C-ից ոչ ցածր - մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ բացակա, - 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 70^{0}C-ում՝ 2-10 %, - կայունությունը բարձր ջերմաստիճանում՝ +5^{0}C, - հոսունությունը և արտաքին տեսքը ցածր ջերմաստիճանում (-50^{0}C-ի դեպքում՝ 6 ժամում) տեսքը՝ մաքուր և միատարր, նստվածք՝ բացակայություն, պղպջակի մակերևույթին հասնելու ժամանակը՝ ոչ ավել 35վրկ - դիմացկունությունը ջրի նկատմամբ (-40^{0}C-ի դեպքում՝ 22 ժամում) տեսքը՝ մաքուր և միատարր, նստվածք՝ բացակայություն,պղպջակի մակերևույթին հասնելու ժամանակը՝ ոչ ավել 10վրկ - ջրածնային ցուցիչը, ph 7.5-9.0, Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով:

<u>1.Եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ԳOUS, ՏՊ, OUS, USO և այլն) տարբերվող ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը:</u>

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն հայտով Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, 15-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ տեսքով.

Չ/Հ	Առաջարկվող ապրանք	Տեխնիկական բնութագրերը
15	Արգելակի հեղուկ՝ ԴOS-4	***<u>USO 36732629-084-2018, ԴOS-4 դասի արգելակման հեղուկ</u>*** Համասեռ, թափանցիկ հեղուկ՝ բաց դեղինից մինչև մուգ դեղին: - կինեմատիկական մածուցիկությունը՝ 100^{0}C ոչ պակաս 2 մմ^{2}/վ, 50^{0}C ոչ պակաս 5 մմ^{2}/վ, -40^{0}C ոչ ավել 1450 մմ^{2}/վ, - հեղուկի (չոր) եռման ջերմաստիճանը՝ 260 ^{0}C-ից ոչ ցածր, - հեղուկի (խոնավ) եռման ջերմաստիճանը՝ 165 ^{0}C-ից ոչ ցածր - մեխանիկական խառնուրդների պարունակությունը՝ բացակա, - 7-2462 մակնիշի ռետինի ծավալի փոփոխությունը 70^{0}C-ում՝ 2-10 %, - կայունությունը բարձր ջերմաստիճանում՝ +5^{0}C, - հոսունությունը և արտաքին տեսքը ցածր ջերմաստիճանում (-50^{0}C-ի դեպքում՝ 6 ժամում) տեսքը՝ մաքուր և միատարր, նստվածք՝ բացակայություն, պղպջակի մակերևույթին հասնելու ժամանակը՝ ոչ ավել 35վրկ - դիմացկունությունը ջրի նկատմամբ (-40^{0}C-ի դեպքում՝ 22 ժամում) տեսքը՝ մաքուր և միատարր, նստվածք՝ բացակայություն,պղպջակի մակերևույթին հասնելու ժամանակը՝ ոչ ավել 10վրկ - ջրածնային ցուցիչը, ph 7.5-9.0, Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳOUS 1510-84-ի: Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 220 լ-ոց տարաներով:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 15-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ 03.05.2021թ. ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում չի շտկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները: Ընկերությունը շտկված փաստաթղթերը ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ՝ 04.05.2021թ. փոխարեն ուղարկել է 05.05.2021թ.:

Այսպիսով՝ վերը նշված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ, հանգեցրել են Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/26» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով սույն գործի քննության շրջանակներում Ընկերության կողմից 02.06.2021թ. գրությամբ որպես փորձաքննություն ներկայացված «Գլոբալքոմ» ՍՊԸ-ի 31.05.2021թ. թվագրված հետևյալ փաստաթղթին.

«2021թ. մայիսի 31-ին իրականացվել է info@autofan.am հասցեով էլեկտրոնային փոստի փորձաքննություն, որի արդյունքում պարզվել է, որ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ի աշխատակից Պողոսյանի համակարգչի (որի վրա գործել է info@autofan.am էլ-փոստը) ծրագրային ապահովման խնդիրների պատճառով Microsoft outlook ծրագիրը 2021թ. մայիսի 3-4-ին աշխատել է ծանրաբեռնված և չի ստացել էլեկտրոնային

նամակագրությունները: Խնդիրը վերացնելու համար իրականացվել է Microsoft Windows ծրագրային ապահովման վերափեղադրում, ինչից հետո՝ սույն թվականի մայիսի 5-ին միայն info@autofan.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկված նամակները հասանելի են դարձել դիտելու համար», գտնում եմ.

Փորձագիտական գործունեության նպատակը գործի քննությունն իրականացնող մարմնին որոշակի փաստական տվյալներով ապահովելն է, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում: Այս տեսանկյունից փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով: Փորձագիտական հետազոտության ընթացքն ու արդյունքներն ամրագրվում են փորձագետի եզրակացության մեջ:

Փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է գործի քննությունն իրականացնող մարմնի ներքին համոզմունքի ձևավորում՝ եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ:

Մինչդեռ «Գլոբալքոմ» ՍՊԸ-ի որպես փորձաքննություն տրամադրած փաստաթղթում առկա չէ եզրակացություն, ինչպես նաև չի պարունակում նշումներ՝ փորձաքննություն կատարած անձի, նրա ունեցած որակավորման, կիրառված մեթոդների մասին, կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրություն, հետազոտությունների արդյունքում արված հետևություններ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ որպես փորձաքննություն ներկայացված «Գլոբալքոմ» ՍՊԸ-ի 31.05.2021թ. թվագրված փաստաթուղթն արժանահավատ և հիմնավորված չէ, ուստիև չի կարող որպես ապացույց դրվել գործով կայացվող որոշման հիմքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2021թ. թիվ 26/26-1/7873-2021 գրությամբ «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**